

## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ԱՐԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

(1882—1958)


1958 թվականին, դեկտեմբեր ամսի 9-ին, ծանր ու երկարատև հիվանդությունից հետո, իր կյանքի 77 տարում, վախճանվեց Սովետական Միության խոշորագույն գիտնական, հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, աշխարհահռչակ ֆիզիոլոգ ակադեմիկոս Լևոն Արգարի Օրբելին:

Լևոն Արգարի Օրբելին ծնվել է 1882 թվականի հուլիսի 7-ին, Հայկական ՍՍՌ Ախտալի շրջանի Մաղկաձոր գյուղում: Միջնակարգ ուսումն ստանալով Թիֆլիսում, Լ. Ա. Օրբելին 1899 թվականին ընդունվում է Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիան, որը փայլուն կերպով ավարտում է 1904 թվականին: Դեռ ուսանողական տարիներին Լ. Ա. Օրբելին ոգեշնչվում է ռուս մեծ ֆիզիոլոգ Իվան Պետրովիչ Պավլովի դասախոսություններով, որը և կանխավճռում է նրա հետագա գիտական գործունեության բախտը:

Վերջացնելով ակադեմիան, Լ. Ա. Օրբելին, Ի. Պ. Պավլովի առաջարկությամբ, գործուղվում է արտասահմանյան մի շարք լաբորատորիաներ, ուր նա աշխատում է հռչակավոր գիտնականների հետ:

1911 թվականին Հայրենիք վերադառնալուց հետո, Լ. Ա. Օրբելին սկսում է աշխատել Պետերբուրգի էքսպերիմենտալ բժշկության ինստիտուտի լաբորատորիայում, հանդիսանալով Ի. Պ. Պավլովի անմիջական օգնականը:

Ի. Պ. Պավլովի մահից հետո, 1936 թվականից ի վեր, Լ. Ա. Օրբելին գլխավորում էր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ի. Պ. Պավլովի անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն ներվային գործունեության ախտաբանության ինստիտուտը, իսկ 1943 թվականից՝ միաժամանակ նաև Ս. Մ. Կիրովի անվան Ռազմա-բժշկական ակադեմիան: Լ. Ա. Օրբելին իր շուրջն է համախմբում գիտական տաղանդավոր երիտասարդությանը և ստեղծում ֆիզիոլոգիական խոշոր դպրոց: Գիտությանը աչքի ընկնող ծառայություններ մատուցելու համար, Լ. Ա. Օրբելին 1935 թվականին ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1943 թվականին նա մտնում է Հայկական ՍՍՌ նոր կազմակերպված Գիտությունների ա-



կադեմիայի, իսկ 1944 թվականին՝ ՍՍՌՄ բժշկական գիտությունների ակադեմիայի կազմի մեջ: Լ. Ա. Օրբելին արտասահմանյան մի շարք գիտությունների ակադեմիաների անդամ էր:

Լ. Ա. Օրբելու անվան հետ է կապված ժամանակակից ֆիզիոլոգիայի հիմնական ուղղությունների ուսումնասիրությունը և պարզաբանումը:

Առանձնապես մեծ են Լ. Ա. Օրբելու ծառայությունները մատերիալիստական էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ստեղծման գործում՝ կապված հայրենական գիտության կորիֆեյներ Ի. Մ. Սենչևովի, Ի. Ի. Մենչիկովի, Ի. Պ. Պավլովի իղեաների զարգացման հետ:

Լ. Ա. Օրբելու ծառայությունները մեծ են նաև Սովետական Բանակի Ռազմա-Մովային ուժերի առջև, ռազմական բժշկության և ֆիզիոլոգիայի մի շարք հարցերի պարզաբանման բնապավառում:

Հսկայական աշխատանք է կատարել Լ. Ա. Օրբելին կադրերի պատրաստման գործում: Նրա բազմաթիվ աշակերտների մեջ կան Սովետական Միության շատ ազգություներին ներկայացուցիչներ: Անգնահատելի է Լ. Ա. Օրբելու դերը Հայաստանում ֆիզիոլոգիական գիտության կազմակերպման և զարգացման, հատկապես կադրերի պատրաստման, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի կազմակերպման գործում: Այն հսկայական ժողովրդականությունը, որ վայելում էր Օրբելին, բացատրվում է նրա բացառիկ էներգիայով և հմտությամբ, որ նա դրսևորում էր գիտական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման ասպարեզում:

Հայկական և սովետական գիտության զարգացման առջև ունեցած աչքի ընկնող ծառայությունների համար Լ. Ա. Օրբելուն շնորհվել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի, բժշկական ծառայության գեներալ-գնդապետի կոչումներ: Նա պարգևատրվել է Լենինի շորս շքանշանով և ՍՍՌՄ այլ շքանշաններով:

Մահը խլեց գիտության շարքերից մեր ժամանակի տաղանդավոր և փայլուն մտածողներից մեկին, խոշորագույն գիտնականի, բյուրեղյա մաքրության տեր մարդու:

Հրաժեշտ տվեց կյանքին մեր Հայրենիքի մեծ քաղաքացին:

Լևոն Աբգարի Օրբելու պաշտոն հիշատակը հավերժ վառ կմնա հայ ժողովրդի սրտում:

